**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-26/3 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքում նոր մարզադպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

02.07.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Ջհիրաքյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Քոչարյան |
| | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| | Ս. Նունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Հակոբյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին**

---

(Ա. Ջհիրաքյան)

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

**«ԱՐՄՍՏՐՈՅ » ՍՊԸ**

Հայտով չի ներկայացվել մասնագետների մասով

1. վերջիններիս գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունները մատուցելու վերաբերյալ,
2. որակավորումը հավաստող փաստաթղթերի՝ համապատասխան լիազորված մարմինների կողմից տրված արտոնագրերի, իսկ նախահաշիվ կազմող մասնագետի համար ԲՈՒՀ-ի կողմից տրված դիպլոմի պատճենները,
3. Հրավերի Հավելված 1.2 պահանջով CV-ները՝ համաձայն ձևաչափի,
4. Էսքիզային նախագիծ,
5. Նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի) պատճենները իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ նախագծի փորձաքննության դրական եզրակացությունը, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 10 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր:

**«ԼՈՒՔ» ՍՊԸ**

1. Հայտով չի ներկայացվել հրավերի Հավելված 1.2-ով պահանջվող CV-ները՝ համաձայն ձևաչափի:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ԱՐՄՍՏՐՈՅ» և «ԼՈՒՔ» ՍՊԸ-ներին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 03.07.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-26/3 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Ջոհրաբյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 06.07.2026թ. ժամը 10:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Ա. Ջոհրաբյան

Անդամ՝ ______________________ Ա. Քոչարյան

______________________ Հ. Գինովյան

______________________ Տ. Կոմիտասյան

______________________ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Գ. Հակոբյան